ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Վայոց Ձորի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Վայոց Ձորի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Վայոց Ձորի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 1,5%-ով և կազմել է 93,9%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1,9%-ով՝ կազմելով 94,3%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,2%-ով՝ կազմելով 99,3%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Զառիթափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (70,4%), «Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ-ում (87,5%):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է

ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1,2%-ով և կազմել 93,9%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1,5%-ով և կազմել 94,3%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Վայոց Ձորի մարզում՝ 28,6%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Վայոց Ձորի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի